ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԵԴ -04 - 2024
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «13» «03» 2024 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Համլիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Գորիսի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս ռեկտոր Տիգրան Վանդունցի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 2372-Ա/2 հրամանով հաստատված «Ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների, մասնագիտական կողմնորոշման ծրագրերի մասին երիտասարդների (այդ թվում՝ արցախյան վերջին պատերազմի մասնակիցների, պատերազմից ներազդված հասարակության այլ շերտերի երիտասարդների) իրազեկության և ներգրավվածության բարձրացման դասընթացների կազմակերպում» միջոցառման շրջանակներում դրամաշնորհի հատկացման մրցույթի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 23-ի նիստի 05 արձանագրությունը՝ որոշման «1115. Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11001. Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառման (տող՝ «Ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների, մասնագիտական կողմնորոշման ծրագրերի մասին երիտասարդների (այդ թվում՝ արցախյան վերջին պատերազմի մասնակիցների, պատերազմից ներազդված հասարակության այլ շերտերի երիտասարդների) իրազեկության և ներգրավվածության բարձրացման դասընթացների կազմակերպում» շրջանակներում «Կարողությունների զարգացում՝ ի նպաստ աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության բարձրացման» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳԻՆԸ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1-ին կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված գումարից 3966.3 հազար (երեք միլիոն ինը հարյուր վաթսունվեց հազար երեք հարյուր) դրամ՝ համաձայն Հավելված N 2-ի, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի Հավելված N 1-ում, իսկ ծրագրի նկարագիրը՝ Հավելված N 3-ում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում համապատասխան չափով նվազեցնել ֆինանսավորումը,

2.1.6. սույն պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ ծրագրի արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված

իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված ծրագրի մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.2. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան հաշվառում,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. պետական մարմնի կողմից ծրագրի իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.7. ծրագրի իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ներառյալ ազդագրերը, հրավիրատոմսերը, մամուլի հրապարակումները և այլն), ինչպես նաև ծրագրի իրականացման մասին իրազեկմանն ուղղված ցանկացած գրավոր և/կամ բանավոր խոսքում հրապարակել պետական մարմնի անունը (որպես ֆինանսավորող կողմ), իսկ համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.8. սույն պայմանագրից բխող ծրագիրը չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 1.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.9. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել Աշխատանքային օրենսգրքով, ինչպես նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.10. սույն պայմանագրի 7.1-ին կետով սահմանված ժամկետներում պաշտոնական գրությամբ պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և

բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 4-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար: Բովանդակային հաշվետվությամբ ներկայացվում է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման, հրապարակման և ընթացքի, այդ թվում՝ արդյունքների գնահատման, մասնակիցների քանակի վերաբերյալ, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլն, ներառյալ՝ իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում պետական մարմնի (որպես ֆինանսավորող կողմ) վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով՝ համաձայն հավելված N 5-ի: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում բովանդակային հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար:

2.4.11. սույն պայմանագրով սահմանված ծրագրի իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

3.1. Պետական մարմիը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև սույն պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է *www.minfin.am* հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (Հավելված N 6) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1-ին կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային

օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված ծրագիրը կամ դրա մի մասը չի համապատասխանում սույն պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե սույն պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում սույն պայմանագրի 4.1-ին կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում սահմանված գումարի 80%-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո՝ ապրիլ ամսին, իսկ 20%-ը՝ սույն պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

5.2. Համաձայն «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2024 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

5.3. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի

չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

6.4.Սույն պայմանագրի 6.2.-րդ և 6.3.-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող են հաշվարկվել և հաշվանցվել ծրագրի իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

7.1. Սույն պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը մինչև 2024 թվականի դեկտեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, բայց ոչ ուշ, քան դեկտեմբերի 10-ը:

7.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7.3.Սույն պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմի

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը

միակողմանի լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.2.Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինն այն ուղարկում է նաև Կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.3. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.4. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2	ք. Գորիս, Ավանգարդ 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732	Հ/Հ 900288000012, ՀՎՀՀ 09210606
Գլխավոր քարտուղար՝	gorsu1967@gmail.com
	Ռեկտոր՝
Հ. Հակոբյան	Տ. Վանդունց
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«13» «03» 2024 թ.
N ԵԴ-04 2024 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	Նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1	Նախապատրաստական աշխատանքներ	Աշխատակազմի հրամանագրում, պայմանագրերի կնքում	Կազմել Ծրագրի ղեկավար անձնակազմի (այդ թվում՝ ծրագրի գործավար) հրամանագրում, կնքել պայմանագրերը, նախապատրաստել դասընթացավարների հրամանների և պայմանագրերի նախագծերը:	Հրամաններ, պայմանագրեր	05.04.2024	Գրավոր հաշվետվություն, 05.05.2024	-
2	Գնում Ընդունելություն	Նախահաշվով նախատեսված ապրանքների և ծառայությունների ձեռքբերում, շահառուների հավաքագրում	Իրականացնել նախահաշվով նախատեսված ապրանքների և ծառայությունների ձեռքբերում, իրականացնել շահառուների հավաքագրում:	Հաշիվ-ապրանքագրեր, վճարման հանձնարարականներ, շահառուների հրամաններ, Ծրագրի ղեկավար անձնակազմի (այդ թվում՝ ծրագրի գործավար) կատարողական ակտեր	30.11.2024	Գրավոր հաշվետվություն, 05.12.2024	1964,8
3	Այցեր	Մասնագիտական կողմնորոշման այցեր դպրոցներ, գործուղումներ	Կազմել մասնագիտական կողմնորոշման այցերի ժամանակացույցեր, Մասնագիտական հաջողություններ գրանցած մասնագետների ցանկը, իրականացնել այցեր, անհրաժեշտության դեպքում՝ նախատեսել գործուղումներ	Դպրոցների տնօրենների կողմից լրացված, կնքված և ստորագրված տեղեկանքներ, գործուղման հրամաններ	30.11.2024	Գրավոր հաշվետվություն, 05.12.2024	175.0
4	Դասընթացներ	Դասընթացների թեմաների հստակեցում և իրականացում	Կազմել դասընթացների ծրագրերը, մշակել ուսումնամեթոդական ռեսուրսներ և իրականացնել դասընթացներ առկա և հեռավար ձևաչափերով:	Իրականացված դասընթացներ, Էլեկտրոնային դասընթացներ GoogleClassroom հարթակում, հեռավար դասընթացների տեսաձայնագրություններ, նկարներ կատարման վերաբերյալ	30.11.2024	Գրավոր հաշվետվություն, 05.12.2024	1130.5
5	Աշխատանքի տոնավաճառի կազմակերպման	Կազմակերպչական աշխատանքներ	Իրականացնել շահառուների հետ հանդիպումներ: Ձեռք	Հրաման-հավաստում աշխատանքի տոնավաճառի	01.07.2024	Գրավոր հաշվետվություն,	-

	նախապատրաստական աշխատանքներ	ի իրականացում	բերել պայմանավորվածություններ:	մեկնարկի վերաբերյալ		15.09.2024	
6	Աշխատանքի տոնավաճառի մեկնարկ	Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում	Անվճար հիմունքներով առանձնացված տարածքների տրամադրում շահառուներին, Բաներների տպագրում, հավաստագրերի բաշխում:	Նկարներ կատարման վերաբերյալ	30.11.2024	Գրավոր հաշվետվություն, 05.12.2024	35.0
7	Ծրագրի գնահատում	Տվյալների ուսումնասիրում	Վերլուծական զեկույցի պատրաստում	Զեկույցի հրապարակում	30.11.2024	Գրավոր հաշվետվություն, 05.12.2024	-
8	Հաշվետվություն	Կազմել բովանդակային և ֆինանսական հաշվետվություններ	Հաշվետվության կազմում և ներկայացում	Հաշիվ-ապրանքագրեր, վճարման հանձնարարականներ	05.12.2024	Էլեկտրոնային հաշվետվություններ, 05.12.2024	-
	ԸՆԴԱՄԵՆԸ՝						3305,3
	ԱԱՀ՝						661,0
	ԱՄԲՈՂՋԸ՝						3966,3

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ
Ք. Գորիս, Ավանգարդ 2
ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական
գանձապետարան
Հ/Հ 900288000012, ՀՎՀՀ 09210606
gorsu1967@gmail.com
Ռեկտոր՝
Տ. Վանդունց

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 2
« 13 » « 03 » 2024 թ.
N ԵԴ-04- 2024 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Կարողությունների զարգացում ի նպաստ աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության բարձրացման» ծրագրի

	Ծախսատեսակի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը (հազար դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Աշխատավարձ (ներառյալ հարկերը)***				
1.1	Ծրագրի ղեկավար	ամիս	7.86	55.0	432.3
1.2	Ծրագրի համակարգող	ամիս	7.86	52.0	408.7
1.3	Ծրագրի հաշվապահ	ամիս	7.86	36.0	283.0
1.4	Կադրային հաշվառման պատասխանատու	ամիս	7.86	25.0	196.5
1.5	Դասընթացավարներ	ժամ	323	3.5	1130.5
1.6	Ծրագրի գործավար	ամիս	7.86	25.0	196.5
	ԸՆԴԱՄԵՆԸ 1				**2647.5**
2	**Կազմակերպչական ծախսեր՝ այդ թվում**				
2.1	Ստենդով մարկերային գրատախտակ (ակերով,մագնիսական, սպիտակ, ջնջոցով, 90x150 սմ)	հատ	2	38.0	76.0
2.2	Մարկերային ֆլիպչարտ, 3 ոտիկով, 60x90 սմ	հատ	1	25.0	25.0
2.3	Գունավոր մագնիսներ	հատ	15	0.6	9.0
2.4	Թեյնիկ էլեկտրական	հատ	1	12.0	12.0
2.5	Ապակյա ջրաման	հատ	2	6.0	12.0
2.6	Մեկանգամյա օգտագործման թղթե բաժակ	փաթեթ	50	0.6	30.0
2.7	Բեյջ լամինացված, թելի հետ միասին A6	հատ	50	0.3	15.0
2.8	Բուկլետների ստենդ (ցուցադարան A4 բուկլետների և ֆլայերների համար, մետաղական)	հատ	1	44.0	44.0
2.9	Նոթատետր	հատ	70	0.16	11.2
2.11	Նշումների թուղթ գունավոր , կպչուն 3x3	հատ	40	0.23	9.2
2.12	Ֆլիպչարտի թուղթ	հատ	3	1.8	5.4
2.13	Թուղթ A4 ֆորմատի	տուփ	6	2.4	14.4
2.14	Ֆոտոթուղթ հավաստագրի համար	հատ	260	0.09	23.4
2.15	Ֆոտոթուղթ բուկլետի համար	հատ	50	0.9	45.0
2.16	Գրիչ կապույտ	հատ	70	0.09	6.3
2.17	Մարկեր գրատախտակի (տարբեր գույների)	հատ	10	0.39	3.9
2.18	Ֆլեշ կրիչ 64 Gb հզորությամբ	հատ	1	5.5	5.5
2.19	Zoom բաժանորդային փաթեթ	հատ	5	8.0	40.0
	ԸՆԴԱՄԵՆԸ 2				**387.3**
3	**Տպագրական ծառայություններ՝ այդ թվում՝**				
3.1	Բաններ՝ 8 քմ	ծառայություն	1	20.0	20.0
3.2	Ստենդով բաններ՝ Roflup և X, 2 հատ	ծառայություն	1	36.0	36.0
3.3	ՊՎԽ՝ տպագրված կտորներ ծրագրի ճանաչելությունը բարձրացնելու միջոց՝ 1 քմ	ծառայություն	1	10.0	10.0

3.4	Նկարվելու դեկոր՝ պատուհանիկ ծրագրի ճանաչելությունը բարձրացնելու միջոց՝ 1 քմ	ծառայություն	1	10.0	10.0
3.5	Սթիքերներ ջրակայուն, A5 ֆորմատի, 30 հատ	ծառայություն	1	19.5	19.5
	ԸՆԴԱՄԵՆԸ 3				95.5
4	**Տրանսպորտային ծառայություններ՝ այց և վերադարձ, (մարդատար ավտոմեքենա) այդ թվում՝**				
4.1	1. Գորիս- Կորնիձոր-Տեղ-Քարաշեն-Հարթաշեն-Գորիս, 2. Գորիս-Վաղատուր-Խոզնավար-Խնածախ-Գորիս, 3. Գորիս- Հարժիս-Շինուհայր-Հալիձոր-Գորիս	հատ	1	69.0	69.0
4.2	Գորիս-Ակներ, Վերնիշեն, Քարահունջ-Գորիս	հատ	1	10.0	10.0
4.3	Գորիս-Սիսիան-Գորիս՝ 2 անգամ	հատ	1	70.0	70.0
	ԸՆԴԱՄԵՆԸ 4				**149.0**
5	**Կեցության ծախսեր՝ այդ թվում**				
5.1	Օրապահիկ՝ 1 անձ x 2 անգամ	մարդ/օր	2	3.0	6.0
5.2	Գիշերակաց՝ 1 անձ x 2 անգամ	մարդ/օր	2	5.0	10.0
5.3	Ճանապարհածախս՝ 1 անձ x 2 անգամ	մարդ/օր	2	5.0	10.0
	ԸՆԴԱՄԵՆԸ 5				**26.0**
	ԸՆԴԱՄԵՆԸ				**3305.3**
	ԱԱՀ**				**661.0**
	ԱՄԲՈՂՋԸ				**3966.3**

* Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով

** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
---------- Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ
ք. Գորիս, Ավանգարդ 2,
gorsu1967@gmail.com
ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական
գանձապետարան
Հ/Հ 900288000012, ՀՎՀՀ 09210606
Ռեկտոր՝ ---------- Տ. Վանդունց
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 3
« 13 » « 03» 2024 թ.
N ԵԴ- 04-2024 պայմանագրի

«ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄՈՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԱՐՑԱԽՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ, ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՆԵՐԱԶԴՎԱԾ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՇԵՐՏԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ) ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ»
դրամաշնորհային ծրագրի

Համառոտագիր

Ներկայացրեք ծրագրի ամփոփ նկարագիրը:

ԵՔ-ԴՄ-ՈՖ-01/24 ծրագիրը շարունակելու է ինստիտուցիոնալ մակարդակում զարգացնել Գորիսի պետական համալսարանի ոչ ֆորմալ կրթության համակարգը, աջակցել աշխատաշուկայում դիրքավորվող տեղաբնակ երիտասարդների որոշ մասի բազմակողմանի զարգացմանը:

Ծրագիրն իր նպատակները կիրականացնի հետևյալ գործողությունների միջոցով.
ա/ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան հմտությունների ձևավորում և բարելավում ոչ ֆորմալ դասընթացների միջոցով,
բ/ մասնագիտական կողմնորոշման այցեր հանրակրթական ուսումնական հաստատություններ,
գ/ աշխատանքի փոնավաճառ,
դ/ հետազոտություն:

Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները.
ա/ ոչ ֆորմալ դասընթացների՝ առնվազն 80 հավաստագրված երիտասարդ մասնակիցներ,
բ/ զբաղմունքի հարցերում երիտասարդների կողմնորոշմանը և աշխատանքի տեղավորմանն աջակցող աշխատանքի փոնավաճառի կազմակերպում,
գ/ ծրագրի ազդեցության վերլուծություն:

Ծրագրի նկարագրություն

Հիմնախնդրի և կարիքի հիմնավորում
Նկարագրեք ներկա վիճակը և հիմնավորեք՝ ինչու է անհրաժեշտ ծրագիրը:

Արդեն երկու տարի է, ինչ Գորիսի պետական համալսարանը ՀՀ ԿԳՄՄՆ աջակցությամբ ԵՔ-ԴՄ-ՈՖ-02/22, ԵՔ-ԴՄ-ՈՖ-02/23 ծրագրերի շրջանակներում զբաղվում է աշխատաշուկայում դիրքավորվող երիտասարդների ոչ ֆորմալ կրթության զարգացմամբ և տարածմամբ: Երկամյա ժամանակահատվածում վերոնշյալ ծրագրերին ընդհանուր առմամբ մասնակցել են 269 երիտասարդներ: Ծրագրերի ազդեցության վերլուծությունների արդյունքները ցույց են տվել, որ ծրագրերի մասնակիցների՝ կարիերայի զարգացմանն ուղղված մտադրությունները 2022-2023 թթ. աճել են մինչև 51.4%, աշխատանքի անցած շահառուների տոկոսային ցուցանիշը ևս աճել է (2.2%): Ծրագրի շրջանակներում վերապատրաստված շրջանավարտները մասնակցել են թափուր պաշտոնների տեղակալման համար կազմակերպված տարբեր մրցույթների կամ ունեցել են նման հավակնություններ (3 մասնակից), որոշները շարունակել են կրթությունը Գորիսի պետական համալսարանի և այլ բուհերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով, որոշները պատվիրել են վերապատրաստման դասընթացներ Գորիսի պետական համալսարանում: Վերլուծությունները ցույց են տվել, որ բացի երիտասարդների ինքնորոշումից, կարիերայի արդյունավետ պլանավորումից, վերոնշյալ ծրագրերի տարբեր միջոցառումներ կարողացել են նաև շղթայական ազդեցություն ունենալ երիտասարդների արժեքների ձևավորման, ներքին և արտաքին միգրացիոն տրամադրությունների վրա: 2023 թ. շահառու երիտասարդները (24.07 %), Արցախի շուրջ տեղի ունեցած իրողություններով պայմանավորված, բավական շատ ժամանակ են տրամադրել կամավորությանը և համագործակցել են բազմաթիվ կամավորական կառույցների հետ: Կարող ենք արձանագրել, որ Գորիսի պետական համալսարանի շարունակական կրթության և կարիերայի զարգացման բաժինը, որը ստեղծվել էր ԵՔ-ԴՄ-ՈՖ-02/22 ծրագրի արդյունքում, այս մեկ տարվա ընթացքում, նաև ի շնորհիվ

այս ծրագրերի, կարողացել է շահել երիտասարդների և գործատուների վստահությունը, դառնալ երիտասարդների համար զբաղվածության հարցերում կողմնորոշվելու և առաջ ընթանալու համար յուրահատուկ հարթակ: Ընդհանուր առմամբ ոչ ֆորմալ կրթության ձեռքբերումները դրական ազդեցություն են թողել Գորիս, Տեղ, Տաթև, Սիսիան համայնքների երիտասարդների առաջընթացի և Գորիսի պետական համալսարանի ընդհանուր կրթական համակարգի վրա: Գորիսի պետական համալսարանը, ի դեմս շարունակական կրթության և կարիերայի զարգացման բաժնի, շարունակում է կարևորել ԵՔ-ԴՄ-ՈՖ-01/24 ծրագրի անհրաժեշտությունը և սույն մրցույթի շրջանակում նախապատրաստել է ծրագրային առաջարկ՝ հիմք ընդունելով վերոնշյալ ծրագրերի արդյունքում 2022 և 2023 թթ. ձեռք բերված հաջողություններն ու վերջնարդյունքները, հաշվի առնելով երիտասարդների հարցումների վերլուծության արդյունքներով բացահայտված, ծրագրի առաջնահերթություններին համահունչ միջոցառումների շարունակաբար իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև 2022 թ. ծրագրի արդյունքում համալսարանում ստեղծված շարունակական կրթության և կարիերայի զարգացման բաժնի՝ սույն ծրագրի առաջնահերթություններին համահունչ խնդիրների լուծման հետագա շարունակականության ապահովման հարցը:

Կազմակերպության փորձառությունը

Ներկայացրեք կազմակերպության առաքելությունը և նպատակները, ինչպես նաև նշված ոլորտում իրականացված ծրագրերը (ժամանակահատված, դրամաշնորհատու կազմակերպություն, բյուջե, նպատակ, արդյունքներ):

«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող պետական, ոչ առևտրային, կրթական, գիտահետազոտական և մշակութային կազմակերպություն է, որն իր հիմնական առաքելություններից է համարում Սյունիքի մարզում կրթության, մշակույթի, արդյունաբերության, իրավական դաշտի ու սպասարկման ոլորտի կարիքներին ու զարգացման հնարավորություններին համահունչ կրթական - հետազոտական ծրագրերի ու ծառայությունների, համագործակցային ծրագրերի պատշաճ իրականացումը, դրանով իսկ ստեղծելով մեծամասամբ մարզաբնակ երիտասարդների լրացուցիչ և շարունակական կրթությանը նպաստող անհրաժեշտ պայմաններ, կարիերայի զարգացման համար կայուն հիմքեր: Գորիսի պետական համալսարանը ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական բազմազան ու բազմաբնույթ գործոններով և իր տարածաշրջանային դերակատարությամբ պայմանավորված՝ շարունակաբար վերագնահատում ու վերանայում է իր դերն ու պատասխանատվությունը, փորձում է մեծացնել իր առավելություններն ու ներուժը՝ պարբերաբար վերոնշյալ ոլորտներում իրականացնելով մի շարք ծրագրեր՝

- ԵՔ-ԴՄ-ՈՖ-02/23 ծածկագրով դրամաշնորհային ծրագիր՝ պայմանագիր ԵԴ-5-2023, 15.03.2023 թ.,
- ԵՔ-ԴՄ-ՈՖ-02/22 ծածկագրով դրամաշնորհային ծրագիր՝ պայմանագիր ԵԴ10, 18.04.2022 թ.,
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամաններ՝
  հր. թիվ 1037-Ա/2, 10.07.2023 թ.,
  հր. թիվ 1359-Ա/2, 22.07.2022 թ.,
  հր. թիվ 1150-Ա/2, 16.06.2022 թ.,
  հր. թիվ 954-Ա/2, 19.05.2022 թ.,
  հր. թիվ 1557-Ա/2, 17.09.2021 թ.,
  հր. թիվ 894-Ա/2, 04.06.2021 թ.,
  հր. թիվ 780-Ա/2, 18.05.2021 թ.,
  հր. թիվ 887-Ա/2, 03.06.2021 թ.,
  հր. թիվ 1187-Ա/2, 09.09.2020 թ.,
  հր. թիվ 1041-Ա/2, 15.11.2019 թ.,
  հր. թիվ 422-Ա/2, 29.04.2019 թ.
- Էրազմուս + SMARTI, T-GREEN, CompIIT միջազգային ծրագրեր:

Իրականացված (այդ թվում՝ ընթացիկ) ծրագրերի մասին ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է ստորև.

#	Իրականացված (այդ թվում՝ ընթացիկ) ծրագրերի անվանումը	Դրամաշնորհատու կազմակեր	Ծրագրի սկիզբը, ավարտը	Բյուջե	Նպատակ	Արդյունքներ

		պությունը				
1	«Ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների, մասնագիտական կողմնորոշման ծրագրերի մասին երիտասարդների (այդ թվում՝ արցախյան վերջին պատերազմի մասնակիցների, պատերազմից ներազդված հասարակության այլ շերտերի երիտասարդների) իրազեկության և ներգրավվածության բարձրացման դասընթացների կազմակերպում» «ԵՔ-ԴՄ-ՈՖ-02/23» ծածկագրով դրամաշնորհային ծրագիր	ՀՀ ԿԳՄՄՆ	2023 թ., մարտ - դեկտեմբեր	3372480 ՀՀ դրամ	Ծրագրի նպատակն է Սյունիքի մարզի Գորիս, Տեղ, Տաթև, Սիսիան համայնքների երիտասարդների մասնագիտական կողմնորոշման ներուժի զարգացման, կարիերայի աջակցման համար պայմանների ստեղծումը:	- ոչ ֆորմալ 13 դասընթացների՝ 162 հավաստագրված երիտասարդ մասնակիցներ, - կազմակերպվել է աշխատանքի տոնավաճառ 20 գործատուների և աշխատանք փնտրող շուրջ 130 երիտասարդների մասնակցությամբ, - պատրաստվել է վերլուծական մեկ զեկույց:
2	«Ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների, մասնագիտական կողմնորոշման ծրագրերի մասին երիտասարդների (այդ թվում՝ արցախյան վերջին պատերազմի մասնակիցների, պատերազմից ներազդված հասարակության այլ շերտերի երիտասարդների) իրազեկության և ներգրավվածության բարձրացման դասընթացների կազմակերպում» «ԵՔ-ԴՄ-ՈՖ-02/22» ծածկագրով դրամաշնորհային ծրագիր	ՀՀ ԿԳՄՄՆ	2022 թ., ապրիլ - դեկտեմբեր	2431890 ՀՀ դրամ	Անվճար դասընթացների միջոցով Սյունիքի մարզի Գորիս, Տաթև, Տեղ, Սիսիան համայնքների 16-35 տարեկան երիտասարդների ն ապահովել անձնային և մասնագիտական աճի համար կարողություններ և հմտություններ՝ աշխատաշուկայում հաջողություններ ունենալու համար, ինչպես նաև աջակցություն տրամադրել մասնագիտական կողմնորոշման հետ կապված:	Ծրագրի 203 շրջանավարտներ, էլեկտրոնային դասընթացներ, դասընթացների փաթեթներ, թափուր աշխատատեղերի բազա, երիտասարդներին միավորող ցանցային հարթակներ, էլիասցեների շտեմարաններ, ՄՄԾ Գորիսի տարածքային կենտրոնի միջև համագործակցության հուշագիր
3	Իրազեկություններ՝ միտված միջազգային նորարարական նախագծերին (CompIIT)	ԵՄ, Erasmus +	2023 – 2025 թթ.	399550 եվրո /չբաշխված/	Ծրագրի նպատակն է հայ ուսանողներին նախապատրաստել միջազգային, թվայնացված և նախագծային աշխատանքային միջավայրին՝ զարգացնելով նրանց նախագծերի իրականացման և հաղորդակցման հմտություններն ու ձեռնարկա	Ակնկալվում է, որ ծրագրի գործընկեր համալսարանները, այդ թվում՝ Գորիսի պետական համալսարանը, կիրականացնեն իրատեսական, նորարարական և աշխատաշուկայի պահանջներին առնչվող նախագծահեն ուսուցման (PjBL) տեխնոլոգիայի կիրառմամբ մասնագետների պատրաստման գործընթաց:

					փիրական կարողու թյունները:	
4	Հետբակալավրի կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի (T-GREEN)	ԵՄ, Erasmus +	2023 – 2026 թթ.	56457 եվրո	Նախագծի հիմնական նպատակն է բուհերի վարչական կազմերի, որոշումներ կայացնողների, քաղաքականությունն մշակողների, մանկավարժների, հետազոտողների և ուսանողների մոտ այնպիսի կարողությունների զարգացումը, որոնց միջոցով նշված դերակատարները կկարողանան կայուն զարգացման նպատակները և բնապահպանական խնդիրները ինտեգրել քաղաքականության և կրթական բովանդակության մեջ:	Նախագծի իրականացումը բուհերին հնարավորություն կտա ավանդական կրթական ծրագրերից անցում կատարել դեպի ապագային միտված, կանաչ և միջառարկայական ուսումնական ծրագրերին՝ խթանելով ուսանողների շարժունակությունը, մշակելով համատեղ որակավորման աստիճան շնորհող կրթական ծրագրերի իրականացման կառուցակարգեր:
5	Աջակցություն անգլերենի միջոցով դասավանդման նորարար մեթոդաբանությանը, մուրեցումներին և դասավանդման գործիքներին՝ կրթության արդյունավետությունը, շարունակականությունը և միջազգայնացումը բարելավելու նպատակով (SMARTI)	ԵՄ, Erasmus +	2020 – 2023 թթ.	25350 եվրո	Ծրագիրը նպատակ ունի օգնել համալսարանին բարձրացնել աշխատաշուկայում ուսանողների պահանջվածությունը EMI (Անգլերենը դասավանդման միջոց) ծրագրերի ներդրմամբ, բարելավել կրթության որակը և մատչելիությունը EMI նորացված բովանդակության և մեթոդների միջոցով՝ աջակցելով բուհերին և կրթության միջազգայնացմանը:	EMI դասընթացների ներդրում և շարժունության ծագրերի խթանում Գորիսի պետական համալսարանում

6	ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով պետական վերապատրաստում	Ինքնաֆին անսա վորում	2023թ. - 2023 թ.	320000 ՀՀ դրամ	ՀՈՒՀ ղեկավարման իրավունք (հավաստագիր) ապահովող թեստավորման քննության մասնակցություն ՀՀ ԿԳՄՄՆ-ում	Արտաքին գնահատման (հավաստագրման) ցուցանիշը՝ 100%
7	Նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով պետական վերապատրաստում	Ինքնաֆին անսա վորում	2023թ. - 2023 թ.	1120000 ՀՀ դրամ	ՀՈՒՀ ղեկավարման իրավունք (հավաստագիր) ապահովող թեստավորման քննության մասնակցություն ՀՀ ԿԳՄՄՆ-ում	Արտաքին գնահատման (հավաստագրման) ցուցանիշը՝ 82%
8	ՀՈՒՀ հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում	ՀՀ հանրակր թական ուսումնակ ան հաստատո ություններ	2023 թ. - 2023 թ.	1710923 ՀՀ դրամ	Նախապատ րաստել փաստաթղթ ային ատեստա վորման	Վերապատրաստվել են 73 ուսուցիչներ
9	ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով պետական վերապատրաստում	Ինքնաֆին անսա վորում	2022 թ. - 2022 թ.	400000 ՀՀ դրամ	ՀՈՒՀ ղեկավարման իրավունք (հավաստագիր) ապահովող թեստավորման քննության մասնակցություն ՀՀ ԿԳՄՄՆ-ում	Արտաքին գնահատման (հավաստագրման) ցուցանիշը՝ 60%
10	Նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով պետական վերապատրաստում	Ինքնաֆին անսա վորում	2022 թ. - 2022 թ.	390000 ՀՀ դրամ	ՀՈՒՀ ղեկավարման իրավունք (հավաստագիր) ապահովող թեստավորման քննության մասնակցություն ՀՀ ԿԳՄՄՆ-ում	Արտաքին գնահատման (հավաստագրման) ցուցանիշը՝ 100%
11	ՀՈՒՀ հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում	ՀՀ հանրակր թական ուսումնակ ան հաստատո ություններ	2022 թ. - 2022 թ.	1608000 ՀՀ դրամ	Նախապատ րաստել փաստաթղթ ային ատեստա վորման	Վերապատրաստվել են 67 ուսուցիչներ

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Համառոտ կերպով նկարագրել՝ որն է ծրագրի նպատակը և ինչ արդյունքներ են ակնկալվում ծրագրի ավարտին:

Ծրագրի նպատակն է ստեղծել պայմաններ Սյունիքի մարզի Գորիս, Տեղ, Տաթև, Սիսիան համայնքների (համայնքների թիվը կարող է ընդլայնվել) երիտասարդների մասնագիտական կողմնորոշման ներուժի զարգացման, կարիերայի աջակցման համար:

Ելնելով վերոնշյալից՝ առանձնացվել են երեք խնդիրներ՝

- Ձևավորել (նաև բարելավել) աշխատաշուկայի պահանջներին համապատասխան հմտություններ աշխատաշուկայում երիտասարդների արդյունավետ ներգրավման համար անհրաժեշտ անձնային և մասնագիտական աճ ապահովող ոչ ֆորմալ հետևյալ դասընթացների միջոցով.

Կոշտ հմտություններ ապահովող ոչ ֆորմալ դասընթացներ՝ մասնագիտական աճի համար.

1. IT Project Management (33 ժամ)
2. Մենեջմենթ (20 ժամ)
3. Աշխատանքային ոլորտի անհատական իրավական ակտերի նախապատրաստումը և դրանց կիրառման առանձնահատկությունները (իրավաբանական տեխնիկա) (30 ժամ)
4. Կադրային հաշվապահություն (20 ժամ)
5. Գնումների գործընթացի կազմակերպում (30 ժամ)

Ճկուն հմտություններ ապահովող ոչ ֆորմալ դասընթացներ՝ անձնային աճի համար (գործատուների կողմից պահանջված ճկուն հմտություններ).

6. Ընդհանուր անգլերեն (90 ժամ) (Գործելու են տարբերակված ծրագրեր՝ A1-B2՝ կախված նախաթեստերի արդյունքներից)
7. Թվային հմտություններ (60 ժամ)
8. Մեդիագրագիտություն (15 ժամ)
9. Թիմային աշխատանք և առաջնորդություն (10 ժամ)
10. Հաղորդակցման հմտություններ և հոգեբանական տեխնիկաներ (5 ժամ)
11. Սթրեսի կառավարում (5 ժամ)
12. Ժամանակի կառավարում և ուշադրություն մանրուքներին (5 ժամ)

- Իրականացնել մասնագիտական կողմնորոշման այցեր Գորիս, Տեղ, Տաթև, Սիսիան համայնքների առնվազն 18 դպրոցներ: Այցերի նպատակն է 11-12-րդ դասարանների աշակերտներին ծանոթացնել ՀՀ մասնագիտական կրթության համակարգին և աշխատաշուկայի պահանջարկին, ցրամադրել մասնագիտական խորհրդատվություն, ծանոթացնել մասնագիտական գործունեության տարբեր բնագավառներում հաջողություն ունեցող մասնագետների հետ, ձևավորել նմանակման ցանկություն, անձնային և մասնագիտական աճի մոտիվացիա:

- Կազմակերպել աշխատանքի տոնավաճառ գործատուների և աշխատանք փնտրող երիտասարդների մասնակցությամբ:

- Իրականացնել ծրագրի ազդեցության վերլուծություն: Հետազոտության արդյունքները ցրամադրելու են անհրաժեշտ տեղեկատվություն ծրագրի ավարտին աշխատանք գտած և մասնագիտության, աշխատանքի ու զբաղմունքի հարցերում հստակ կողմնորոշում ձևավորած շահառուների վերաբերյալ:

Ակնկալվող արդյունքները՝

- ոչ ֆորմալ դասընթացների՝ առնվազն 80 հավաստագրված երիտասարդ մասնակիցներ,
- զբաղմունքի հարցերում երիտասարդների կողմնորոշմանը և աշխատանքի տեղավորմանն աջակցող աշխատանքի տոնավաճառի կազմակերպում,
- ծրագրի ազդեցության վերլուծություն:

Գործողություններ

Որոնք են այն կոնկրետ գործողությունները և մեթոդները ծրագրի նպատակի իրագործմանն ուղղված յուրաքանչյուր խնդրի համար: Ներկայացնել ամսական կտրվածքով աշխատանքային պլան՝ համաձայն ստորև ներկայացված ձևաչափի.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմակերպություն «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ

Ծրագիր *«Կարողությունների զարգացում՝ ի նպաստ աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության բարձրացման»*

Ժամանակահատված *05.04.2024 թ. – 05.12.2024 թ.*

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս											
			1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Աշխատանքների նախապատրաստում: Ծրագրի իրականացման համար կնքվում են անհրաժեշտ պայմանագրերը, պատրաստվում է դասընթացի մասնակցության առցանց հայտադիմումը: ՀՀ ԿԳՄՄՆ պաշտոնական կայքի, Գորիսի պետական համալսարանի, Սյունիքի մարզպետարանի, համայնքապետարանների պաշտոնական կայքէջերի միջոցով, Գորիսի պետական համալսարան, ԳՊՀ շարունակական կրթության և կարիերայի զարգացման բաժին ֆեյսբուքյան էջերով տարածվում է ծրագրի մասին հայտարարություն, կատարվում է մասնակիցների հավաքագրում՝ հայտադիմումի հիման վրա, կատարվում է անհրաժեշտ գնումների մի մասը, հստակեցվում են դասընթացների թեմաները և ժամանակացույցերը, թարմացվում են եղած էլեկտրոնային դասընթացները, ստեղծվում են նորերը: Կազմվում են մասնագիտական կողմնորոշման այցերի ժամանակացույցեր, ձեռք են բերվում պայմանավորվածություն	Ծրագրի ղեկավար, համակարգող, հաշվապահ, կադրային հաշվառման պատասխանատու, ծրագրի գործավար, դասընթացավարներ:												

	ներ:													
2	Ծրագրի իրականացում: Կատարվում են մասնագիտական կողմնորոշման այցեր դպրոցներ: Շարունակվում է մասնակիցների հավաքագրման աշխատանքները: Տեղի են ունենում հանդիպումներ երիտասարդների կարիերայի խնդիրներով զբաղվող կառույցների պատասխանատուների հետ: Առկա, հեռավար, համակցված ձևաչափերով Գորիսի պետական համալսարանում կազմակերպվում են 12 դասընթացներ՝ հիմնված ինտերակտիվ մեթոդների վրա: Նախատեսված աշխատանքի տոնավաճառի մասին ծանուցումների առաքումներ, աշխատանքի տոնավաճառին մասնակցության պայմանավորվածությունների ձեռքբերում: Աշխատանքի տոնավաճառի կազմակերպչական աշխատանքների իրականացում: Կատարվում է անհրաժեշտ գնումների մյուս մասը: Աշխատանքի տոնավաճառի մեկնարկ:	Ծրագրի ղեկավար, համակարգող, հաշվապահ, կադրային հաշվառման պատասխանատու, դասընթացավարներ, ծրագրի գործավար, կամավորներ:													

3	Ծրագրի ազդեցության գնահատում: Ծրագրի տեսանելիության ապահովմանն ուղղված քայլեր: Կատարվում է ծրագրի արդյունքների գնահատում գնահատման ոչ ֆորմալ /բանավոր/ և ֆորմալ /հատուկ մշակված անանուն հարցաթերթ/ մեթոդների համադրմամբ: Վերլուծական զեկույցի կազմում:	Ծրագրի ղեկավար, համակարգող, հաշվապահ, կադրային հաշվառման պատասխանատու, ծրագրի գործավար:												
4	Ծրագրի ամփոփում: Հավաստագրերի բաշխում Կազմվում և էլեկտրոնային եղանակով ներկայացվում են ծրագրի բովանդակային և ֆինանսական հաշվետվությունները ՀՀ ԿԳՄՍՆ համապատասխան ստորաբաժանում:	Ծրագրի ղեկավար, համակարգող, հաշվապահ, կադրային հաշվառման պատասխանատու, ծրագրի գործավար:												

Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը

Ովքեր են ծրագրի ուղղակի շահառուները: Նկարագրեք ծրագրի շահագրգիռ կողմերին և հետաքրքրված խմբերին և նրանց ներգրավվածությունը ծրագրում:

Ծրագրի ուղղակի շահառուները հիմնականում Սյունիքի մարզի Գորիս, Տաթև, Տեղ և Սիսիան համայնքների 16 – 35 տարեկան երիտասարդներ են (արցախյան վերջին պատերազմի մասնակից երիտասարդներ, պատերազմից ներազդված հասարակության այլ շերտերի երիտասարդներ (սահմանամերձ և սահմանապահ դարձած համայնքների երիտասարդներ), Գորիսի պետական համալսարանի ուսանողներ, սոցիալական հանգամանքներով պայմանավորված բարձրագույն կրթության հնարավորությունների սահմանափակումներով երիտասարդներ, կրթական հաստատությունների և բիզնես ոլորտի ներկայացուցիչներ, ՏԻՄ ներկայացուցիչներ, զինծառայողներ, որոնք ունեն ցանկություն աշխատաշուկայում արդյունավետ ձևով ներգրավվելու, բայց չունեն անհրաժեշտ հմտություններ կամ ունեն արդեն ձեռքբերած հմտությունները բարելավելու անհրաժեշտություն: Ծրագրին մասնակցության հնարավորություն կունենան բոլոր շահառուները անվճար հիմունքներով: Ծրագրի յուրաքանչյուր շահառու կարող է գրանցվել առավելագույնը 3 դասընթացի (հնարավոր է վերանայվի սահմանափակումը): Տրանսպորտի և սննդի ծախս ծրագրով չի նախատեսվում:

Ռիսկերի գնահատում

Որոնք են ծրագրի իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերը և դրանց հաղթահարման ռազմավարությունը:

Ծրագրի իրականացման հետ կապված հիմնական ռիսկը սահմանային իրավիճակի սրացումներն են: Եթե լինեն ֆորս-մաժոր իրավիճակներ, ստիպված կլինենք ծրագիրն իրականացնել փոփոխված ժամանակացույցով:

Ծրագրի աշխատակազմը

Նկարագրել ներգրավվող և վճարվող աշխատակիցների և/կամ փորձագետների պատասխանատվության շրջանակը՝ համաձայն աղյուսակի և կցել կենսագրականները.

Հ/Հ	Անուն, ազգանուն	Դերը/պատասխանատվության շրջանակը ծրագրում	Աշխատակցի կամ փորձագետի փորձառությունը
1.	Տիգրան Վանդունց	Ծրագրի ղեկավար Պլանավորում, իրականացնում և վերահսկում է ծրագրով նախատեսված ողջ գործընթացը՝ համաձայն կնքված պայմանագրերի:	ԳՊՀ ռեկտոր, տ.գ.թ., դոցենտ
2.	Արփինե Դինունց	Ծրագրի համակարգող Ապահովում է ծրագրի միջոցառումների պատշաճ, որակյալ համակարգումը:	ԳՊՀ շարունակական կրթության և կարիերայի զարգացման բաժնի վարիչ, ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
3.	Ռուզաննա Թապտուղյան	Հաշվապահ Ապահովում է ծրագրի շրջանակներում հաշվապահական հաշվառման վարումը, հաշվետվությունների ժամանակին կազմումը և համապատասխան մարմիններին ներկայացումը:	ԳՊՀ գլխավոր հաշվապահ
4.	Հասմիկ Միրզոյան	Կադրային հաշվառման պատասխանատու Ապահովում է ծրագրի շրջանակներում աշխատակազմի կադրային գործի վարումը, ծառայությունների մատուցման պայմանագրերի և ծառայությունների հանձնման-ընդունման ակտերի ժամանակին կազմումը:	ԳՊՀ-ի աշխատակազմի կառավարման բաժնի ղեկավար
5.	Անի Գալստյան	Ծրագրի գործավար Աջակցում է ծրագրի համակարգողին և ծրագրում ներգրավված աշխատակազմին, իրականացնում է ծրագրի գործավարությունը, ընթացիկ հաղորդակցությունը և համակարգողի հանձնարարությունների կատարումը:	ԳՊՀ շարունակական կրթության և կարիերայի զարգացման բաժնի մասնագետ
6.	Հարուհի Օհանյան	Դասընթացավար Ապահովում է «IT Project Management» (33 ժամ) դասընթացի պատշաճ, որակյալ մատուցումը՝ ՀՀ ԿԳՄՄՆ պահանջներին համապատասխան:	Technical Project Lead & Solution Owner (R&D – Hardware Engineering), Diebold Nixdorf, Berlin, Germany
7.	Սյուզաննա Պետրոսյան	Դասընթացավար Ապահովում է «Մենեջմենթ» (20	ԳՊՀ հաշվապահ,

		ժամ) դասընթացի պատշաճ, որակյալ մատուցումը՝ ՀՀ ԿԳՄՄՆ պահանջներին համապատասխան:	տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դասախոս
8.	Արկադի Հովհաննիսյան	Դասընթացավար Ապահովում է «Իրավական ակտերի նախապատրաստումը և դրանց կիրառման առանձնահատկությունները (իրավաբանական տեխնիկա) » (30 ժամ) դասընթացի պատշաճ, որակյալ մատուցումը՝ ՀՀ ԿԳՄՄՆ պահանջներին համապատասխան:	ԳՊՀ իրավախորհրդատու, փաստաբան
9.	Ռուզաննա Թապպուղյան	Դասընթացավար Ապահովում է «Կադրային հաշվապահություն» (20 ժամ) դասընթացի պատշաճ, որակյալ մատուցումը՝ ՀՀ ԿԳՄՄՆ պահանջներին համապատասխան:	ԳՊՀ գլխավոր հաշվապահ, տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դասախոս
10.	Արմինե Շալունց	Դասընթացավար Ապահովում է «Գնումների գործընթացի կազմակերպում» (30 ժամ) դասընթացի պատշաճ, որակյալ մատուցումը՝ ՀՀ ԿԳՄՄՆ պահանջներին համապատասխան:	ԳՊՀ գնումների համակարգող, տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դասախոս
11.	Անժելա Մինասյան	Դասընթացավար Ապահովում է «Ընդհանուր անգլերեն» (60 ժամ) դասընթացի պատշաճ, որակյալ մատուցումը՝ ՀՀ ԿԳՄՄՆ պահանջներին համապատասխան:	Հայաստանի եվրոպական համալսարանի դասախոս, ՀԱՀ շարունակական կրթության բաժնի անգլերենի վերապատրաստող
12.	Թագուհի Գրիգորյան	Դասընթացավար Ապահովում է «Ընդհանուր անգլերեն» (30 ժամ) դասընթացի պատշաճ, որակյալ մատուցումը՝ ՀՀ ԿԳՄՄՆ պահանջներին համապատասխան:	Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի անգլերենի ուսուցիչ
13.	Տիգրան Վանդունց	Դասընթացավար Ապահովում է «Թիմային աշխատանք և առաջնորդություն» (10 ժամ) դասընթացի պատշաճ, որակյալ մատուցումը՝ ՀՀ ԿԳՄՄՆ պահանջներին համապատասխան:	ԳՊՀ ռեկտոր, տ.գ.թ., դոցենտ
14.	Բաղդասարյան Անահիտ	Դասընթացավար Ապահովում է «Մեդիագրագիտություն» (15 ժամ) դասընթացի պատշաճ, որակյալ մատուցումը՝ ՀՀ ԿԳՄՄՆ պահանջներին համապատասխան:	Գորիսի մամուլի ակումբի փորձագետ
15.	Արփինե Դինունց	Դասընթացավար Ապահովում է «Թվային հմտություններ» (60 ժամ) դասընթացի պատշաճ, որակյալ մատուցումը՝ ՀՀ ԿԳՄՄՆ պահանջներին համապատասխան:	ԳՊՀ շարունակական կրթության և կարիերայի զարգացման բաժնի վարիչ, ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
16.	Սոնա Ալավերդյան	Դասընթացավար Ապահովում է «Ժամանակի կառավարում և ուշադրություն մանրուքներին» (5 ժամ) դասընթացի պատշաճ, որակյալ մատուցումը՝ ՀՀ ԿԳՄՄՆ պահանջներին համապատասխան:	ԳՊՀ-ի արտաքին կապերի և համագործակցության բաժնի մասնագետ

17.	*Նազելի Հախվերդյան*	*Դասընթացավար* *Ապահովում է 10 ժամ ծավալով դասընթացների խմբի պատշաճ, որակյալ մատուցումը՝ ՀՀ ԿԳՄՄՆ պահանջներին համապատասխան՝* *1. Սթրեսի կառավարում (5 ժամ)* *2. Հաղորդակցման հմտություններ և հոգեբանական տեխնիկաներ (5 ժամ)*	*ԳՊՀ-ի ընդհանուր մանկավարժության և հատուկ կրթության ամբիոնի դոցենտ, հ.գ.թ.*

Հանրահռչակում և Ծրագրի տեսանելիության բարձրացմանն ուղղված քայլեր

Ներկայացնել Ծրագրի հանրայնացման և մարքեթինգային գործողությունների պլանը, միջոցառումների ընթացքի և արդյունքների լուսաբանման եղանակները:

Հանրայնացման միջոցները	Ընթացիկ գործողությունները	Ակնկալվող արդյունքները	Ժամկետները
www.gorsu.am	Կայքէջում ծրագրին նվիրված բաժնի թողարկում:	Ծրագրի լրատուի առկայություն ծրագրի ողջ ընթացքում:	Մեկնարկը՝ 15.04.2024 թ.
https://escs.am/am **http://syunik.mtad.am/** **https://erit.am/am**	Ծրագրի մասին հայտարարության տարածում:	Ծրագրի մասին իրազեկման ապահովում:	Մեկնարկը՝ 15.04.2024 թ.
Սոցիալական հարթակներ https://www.facebook.com/GorisSU https://www.facebook.com/ExtensionCareerGSU https://www.facebook.com/syunikregionaladministration https://www.facebook.com/GorisMunicipality https://www.facebook.com/profile.php?id=100076731272703 https://www.facebook.com/TatevMunicipality https://www.facebook.com/profile.php?id=100064654481011 https://www.facebook.com/GorisToday https://www.facebook.com/Sisian.info https://www.facebook.com/yourpportunities2017 https://www.facebook.com/groups/439082546170671 https://www.facebook.com/groups/107619365977084	Էլեկտրոնային հայտադիմումների ակտիվ առաջմղում համապատասխան հեշթեգերով:	Էլեկտրոնային գրանցումների դինամիկայի ապահովում:	Փուլային, ծրագրի ողջ ընթացքում վերանայելու հնարավորությամբ

Իրազեկող պաստառներ, հոլովակներ, տեղեկատվական առցանց հանդիպումներ, այցեր դպրոցներ	Թեմատիկ ռեսուրսների տարածում:	Մասնագիտական կողմնորոշում, մասնակիցների հավաքագրում, ընթացքի և արդյունքների լուսաբանում:	Մեկնարկը՝ 05.04.2024 թ.
Աշխատանքի տոնավաճառ	Բաներների տպագրության պատվիրում համապատասխան լոգունգներով, հեշթեգերով, ծրագրի մասին իրազեկող հրապարակումներ, հավաստագրերի բաշխում:	Իրազեկության բարձրացում: Միջոցառումների ընթացքի և արդյունքների լուսաբանում:	2024 թ., սեպտեմբեր - նոյեմբեր
Հետազոտությունն երի արդյունքների ներկայացում	Վերլուծական զեկույցի պատրաստում:	Զեկույցի հրապարակում	Մեկնարկը՝ 01.06.2024 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ
Ք. Գորիս, Ավանգարդ 2
ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական
գանձապետարան
Հ/Հ 900288000012, ՀՎՀՀ 09210606
gorsu1967@gmail.com
Ռեկտոր՝
Տ. Վանդունց

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 4
«13» «03» 2024 թ.
N ԵԴ -04-2024 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____
Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2024 թ.

Կատարող կազմակերպության ղեկավարը՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Փաստաթղթերն ընդունեց՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 5
« 13 » « 03 » 2024 թ.
N ԵԴ-04 -2024 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

2.6 Խնդրում ենք նշել, ծրագրի ազդեցության վերլուծությունը՝ նշելով ծրագրին մասնակից երիտասարդների թիվը,

2.7 միջոցառմանն ընդգրկվելու ցանկություն հայտնած անձանց թվաքանակը,

2.8 միջոցառման իրականացման տարածքային ընդգրկվածությունը,

2.9 միջոցառման արդյունքի հասանելիությունը տարբեր հարթակներում,

2.10 մասնակիցների գոհունակությունը ծրագրի արդյունքներից,

2.11 ծրագրի իրականացման ընթացքում ստեղծված կայուն արժեքները,

2.12 ծրագրի շրջանակներում օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված ֆինանսական ծախսերը

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ
Քաղ. Գորիս, Ավանգարդ 2
ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական
գանձապետարան
Հ/Հ 900288000012, ՀՎՀՀ 09210606
gorsu1967@gmail.com
Ռեկտոր՝
Տ. Վանդունց

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 6
«13» «03» 2024 թ.
N ԵԴ -04-2024 պայմանագրի

Կազմակերպություն	Պետական մարմին
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և կազմակերպությունը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում կազմակերպությունն իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.